ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հոկտեմբերի 8-9-ը Վրաստան (Թբիլիսի) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը.**
   Արման Ուդումյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Վրաստան (Թբիլիսի), 2019 թվականի հոկտեմբերի 8-9-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի Հարավային Կովկասի գրասենյակ

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.*

Նվազագույն աշխատավարձի վերաբերյալ միջազգային համաժողովին մասնակցություն և Հայաստանի փորձի ներկայացում:

6. **Քննարկված թեմաները.**

- Նվազագույն աշխատավարձի հաշվարկման և բարձրացման մեթոդաբանությունների եվրոպական փորձը,
- նվազագույն աշխատավարձի հաշվարկման և բարձրացման մեթոդաբանությունների (բարեփոխումների) հայկական փորձը,
- նվազագույն աշխատավարձի հաշվարկման և բարձրացման քաղաքականության վրացական փորձը,
- գնաճին զուգահեռ ինդեքսավորման հիմքի վրա՝ նվազագույն աշխատավարձի ամենամյա բարձրացման հնարավորությունները:

Համաժողովին մասնակցել են կառավարության և պառլամենտի անդամներ, քաղաքական և տնտեսական վերլուծաբաններ, փորձագետներ, լրագրողներ և

քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ Վրաստանից, Հայաստանից, Գերմանիայից, Ուկրաինայից, ինչպես նաև օտարերկրյա ներկայացուցչությունների անդամներ և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի քաղաքականության և տարբեր մեթոդաբանություններով հաշվարկված նվազագույն աշխատավարձի առաջարկվող բարձրացման ներկայացում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի ընթացքում որոշումներ չեն ընդունվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամին առաջարկել եմ տարեկան կտրվածքով կազմակերպել նմանատիպ համաժողովներ՝ համակարգելու և փոխադարձաբար ուսումնասիրելու Հայաստանի և Վրաստանի փորձը, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի քաղաքականությունների հասցեականությունը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

10.10.2019թ.